հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել
հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 180 000 ՀՀ դրամ:

1.5. 0.3865 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-004-0150-0013, գործառնական
նշանակությունը՝ 4-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության
հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի
կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 403 000 ՀՀ դրամ:

Լոտի ընդհանուր չափը՝ 0.95183հա, գումարը՝ 1 003 000 դրամ:

Լոտ 2. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ագարակաձոր բնակավայրի
վարչական տարածքում գտնվող.

2.1. 0.80025 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-004-0137-0002, գործառնական
նշանակությունը՝ այլ հողատեսք) գյուղատնտեսական նշանակության հողամասը
աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի
150 %-ից ոչ պակաս՝ 835 000 ՀՀ դրամ:

2.2. 0.21 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-004-0138-0010, գործառնական
նշանակությունը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության
հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի
կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 220 000 ՀՀ դրամ:

2.3. 0.07555 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-004-0301-0004, գործառնական
նշանակությունը՝ այլ հողատեսք) գյուղատնտեսական նշանակության հողամասը
աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի
150 %-ից ոչ պակաս՝ 80 000 ՀՀ դրամ:

2.4. 0.16746 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-004-0116-0024, գործառնական
նշանակությունը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության
հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի
կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 175 000 ՀՀ դրամ:

Լոտի ընդհանուր չափը՝ 1.25326հա, գումարը՝ 1 310 000 դրամ:

Լոտ 3. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի
վարչական տարածքում գտնվող 0.48962 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0126-
0004, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական
նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել
հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 400 000 ՀՀ դրամ:

Լոտ 4. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Գնիշիկ բնակավայրի
վարչական տարածքում գտնվող 0.10421 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-017-0229-
0038, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի
նշանակության հողամասը, հասցե՝ գ.Գնիշիկ 8-րդ փողոց 23, աճուրդով օտարել:

Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 100 000 ՀՀ դրամ:

Լոտ 5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.1213 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-017-0229-0037, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ գ.Գնիշիկ 8-րդ փողոց 25, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 115 000 ՀՀ դրամ:

Լոտ 6. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.08161 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-017-0102-0005, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ գ.Գնիշիկ 1-ին փողոց 36, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 80 000 ՀՀ դրամ:

2. Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Սմբատ Սարգսյանին՝ նախապարասրել և ներկայացնել Լոտ 4-ից լոտ 6-ով օտարվող հողամասերի ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագծերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ղեկավար՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 297-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ԽՈՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ 0.03ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՅԵԼՈՒ ԵՎ
ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 101-րդ հոդվածի 1-ից 3-րդ մասերը, քաղաքացի Խորեն Ավետիսյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը **որոշում է.**

1. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 0.03 հա բնակավայրերի նշանակության (ծածկագիրը՝ 10-020-0109-0147, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Վերը նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց Ձորի մարզ, Արենի համայնք, գ. Ելփին, Երևանյան մայրուղի, 93-94 կիլոմետր 77 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 298-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼԵՎՈՆ ԱՂՎԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.51ՀԱ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ
ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և Լևոն Ղազարյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը **որոշում է**.

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Լևոն Աղվանի Ղազարյանին, Ռոզա Սասնիկի Ղազարյանին, Գոհար Լևոնի Ղազարյանին և Մարտին Լևոնի Ղազարյանին համասեփականության իրավունքով պատկանող 0,51 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0306-0022, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 299-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ԽԱՉԻԿ ԲԻԼԱԼԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ
ՓՈԽԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և
հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և Խաչիկ
Ստեփանյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը **որոշում է**.

1. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Բիլալ
Խաչատուրի Ստեփանյանին, Ռիմա Մանուկի Ստեփանյանին, Խաչիկ Բիլալի
Ստեփանյանին, Գոհար Բենիկի Ալավերդյանին և Ազգանուշ Բիլալի
Ստեփանյանին համասեփականության իրավունքով պատկանող 0,1 հա
գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-037-0105-0069, հողատեսքը՝
արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝
վարելահող գործառնական նշանակության:

2. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Բիլալ
Խաչատուրի Ստեփանյանին, Ռիմա Մանուկի Ստեփանյանին, Խաչիկ Բիլալի
Ստեփանյանին, Գոհար Բենիկի Ալավերդյանին և Ազգանուշ Բիլալի
Ստեփանյանին համասեփականության իրավունքով պատկանող 0,252 հա
գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-037-0105-0067, հողատեսքը՝
արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝
վարելահող գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 300-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.04866ՀԱ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ,
ՀԱՅԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՇՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը, ՀՀ կառավարության 29.12.2011թվականի թիվ 1920-Ն որոշումը, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, Արենի համայնքի ավագանու 18.10.2022թվականի թիվ 115-Ա որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին մասի 14-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.04866հա հողամասի (ծածկագիր՝ 10-006-0339- , գործառնական նշանակությունը՝ արտավայր) նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության:
2. 0.04866հա հողամասի վրա ինքնակամ կառուցված 73.5քմ պահեստը և 31.0քմ բաց բաշտգամբը՝ ընդամենը 104.5քմ ճանաչել օրինական (կցվում է շինությունների և հողամասի հատակագիծը)
3. Ինքնակամ կառույցները օրենքով սահմանված կարգով հաշվառված են ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 2022WDP4QB:
4. Վերը նշված 0.04866հա արդյունաբերական նշանակության հողամասին և պահեստի շենքին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ ՎՁՄ, Արենի համայնք, գ. Աղավնաձոր 13փ., թիվ 28:
5. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն

ըստ ստորադասակարգման օբյեկտների օտարասա կամ ասվտասգոյթյաս գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,

6. Առաջարկել Արենի համայնքի ավագանուն սույն որոշման 2-րդ կետում նշված օրինականացված կառույցները և 0.04866 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած ժորժ Խաչատրյանին, և առաջարկել նրան.

ա) վճարելու 1ք.մ.' 2056 ՀՀ դրամ ինքնական կառուցված 104.5 քմ ընդհանուր մակերեսով շինությունների համար՝ ընդամենը 214 852 (երկու հարյուր տասնչորս հազար ութ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները

բ) վճարելու 0.04866 հա արդյունաբերական նշանակության հողամասի արժեքը՝ 659 578 ՀՀ դրամ ($313.5 \text{ քմ} \cdot 792 \text{ դր} = 248 \text{ 292 դր.}, 173.1 \text{ քմ} \cdot 792 \text{ դր} \cdot 3 = 411 \text{ 286}$, ընդամենը՝ 659 578 ՀՀ դրամ), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգի 33.1 և 33.2 կետերը:

գ) վճարելու համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

7. Ավագանու որոշման ընդունման օրվանից, ինքնական կառույցն իրականացրած անձի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում նախատեսված գնման նախապատվության առաջարկը չընդունվելու, կամ գնման նախապատվության առաջարկն ընդունվելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցների և դրանց սպասարկման համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում, նշված կառույցները և դրանց սպասարկման համար անհրաժեշտ 0.1 հա հողամասը կվաճառվի աճուրդով՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, կամ դատական կարգով երկամսյա ժամկետում:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



[Handwritten signature in blue ink]

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 301-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 25.08.2021ԹՎԱԿԱՆԻ
ԹԻՎ 23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման
մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք
ընդունելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի
մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը, Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

Արենի համայնքի ղեկավարի կողմից տրամադրված 25.08.2021թվականի թիվ 23
շինարարության թույլտվության 1-ին պարբերության մեջ կատարել փոփոխություններ՝

<<L=1624.9մ ընդհանուր երկարությամբ, DN25մմ-DN108մմ պողպատե
խողովակներով>> բառերը և թվերը փոխարինել <<պողպատե խողովակներով
L=1551.7 գծմ ընդհանուր երկարությամբ>> բառերով և թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 302-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2 ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ 6
ՀԱՍՅԵՌԻՄ ԳՏՆՎՈՂ ԶՈՆԻԿ ՕՆԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով լիազորված անձ Կարեն Մկրտչյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը **որոշում է.**

1. Ճանաչել ժառանգորդ Զոնիկ Օնիկի Մկրտչյանի սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրի 2 փողոց, թիվ 6 հասցեում գտնվող բնակելի տան 91.9քմ. /կիսանկուղ/, աստիճանավանդակի 2.6քմ/կիսանկուղ/, բաց պատշգամբի 8.1քմ /կիսանկուղ/, տան՝ 33.3քմ/1-ին հարկ/, բաց պատշգամբի 39.0քմ./1-ին հարկ/, մառանի՝ 14.4 քմ, ծածկի՝ 19.1քմ., ծածկի՝ 29.0քմ., պարսպի 7.5քմ և պարսպի՝ 11.4քմ նկատմամբ:

2. Բնակելի տունը և Օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը.

3. Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 303-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՈՎԻԿ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐԶՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ
ՓՈԽԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և
հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և Հովիկ
Այվազյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը **որոշում է**.

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում
գտնվող, Հովիկ Անուշավանի Այվազյանին սեփականության իրավունքով
պատկանող 0,574 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0248-
0002, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի
բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգի գործառնական նշանակության:

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող,
Հովիկ Անուշավանի Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող 0,805 հա
գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0248-0003, հողատեսքը՝
վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք
հողատեսքի՝ պտղատու այգի գործառնական նշանակության:

3. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող,
Հովիկ Անուշավանի Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող
0,5567 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0248-0007,
հողատեսքը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք
հողատեսքի՝ պտղատու այգի գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 304-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17.10.2022ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 253-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը, Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

Արենի համայնքի ղեկավարի 17.10.2022թվականի «Արենի համայնքի Արենի բնակավայրի 2-րդ փողոց թիվ 6 հասցեում գտնվող ինքնակամ կառույցները օրինականացնելու, հողամասի տեղադիրքի և գծային չափերի կոորդինատային համակարգով ուղղում տալու նպատակով առաջացած 0,01151հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին» թիվ 253-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1. տեքստի առաջին մասից հանել «և Ռեմա Ասատուրի Մկրտչյանին (մահացած)» բառերը:



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 305-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 34-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը և սեփականատեր Նարինե Կուրեխյանի դիմումը, Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի 34-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-008-0021-0010, հողամասի չափը՝ 0.121 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Նարինե Վանուշի Կուրեխյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ (1-ին հարկ) 60.58քմ, բնակելի տունը՝ (2-րդ հարկ) 62.25քմ, ծածկը՝ 32.64 քմ և ծածկը՝ 24.00քմ, ընդամենը 179.47քմ ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 2022BFMPAV:
3. Առաջարկել կառույցն իրականացրած Նարինե Կուրեխյանին վճարելու 1 քմ.՝ 1209 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տան համար՝ ընդամենը 148 502 ՀՀ դրամ (մեկ հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր երկու) ՀՀ դրամ և վճարելու 1քմ. 725.4 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված օժանդակ շինությունների համար՝ ընդամենը 41 087 ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:
4. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարները վճարվում են անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355105082:

5. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
6. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած ընկերության կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 306-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀԱԿՈՒ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԱԳԾՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին մասի 4-րդ կետը, Արենի համայնքի ավագանու 30.11.2022թվականի թիվ 148-Ա որոշումը, Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

- Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Հակոբ Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.184հա (Ծածկագիրը՝ 10-008-0109-0006, հողատեսքը՝ վարելահող) հողամասից առանձնացված 0.05668հա հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության՝ գինու արտադրամասի կառուցման նպատակով:
- Կառուցապատող Հակոբ Ասատրյանին տրամադրել նախագծման թույլտվություն, որի հերթական համարն է՝ թիվ 63:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 307-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԼՈՒՍԻՆԵ ԱՐԱՄԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2011թվականի թիվ 1920-Ն որոշումը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 20.10.2022թվականի թիվ 01/07.2/6770-2022 գրությունը, Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

1. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքի 8-րդ փողոց 2/1 հասցեում գտնվող, Լուսինե Արամի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության 0.0562հա (ծածկագիրը՝ 10-012-0044-0009, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա՝ հանրային սննդի կետի կառուցման և սպասարկման նպատակով:
2. Կառուցապատող Լուսինե Մկրտչյանին տրամադրել նախագծման թույլտվություն, որի հերթական համարն է՝ 65:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 308

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 16-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻՈՍ
ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ
հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ
397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն
որոշումը, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը և սեփականատեր
Լեվոն Համբարձումյանի դիմումը, Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող Լևոն Արսենի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 0.1339հա (ծածկագիրը՝ 10-006-0090-0005) հողամասը վերահասցեավորել ՀՀ Վայոց ձորի մարզ Արենի համայնք, գ. Աղավնաձոր 16փ թիվ10, նախկինում տրված 22-րդ փ թիվ 104 հասցեի փոխարեն:
2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի 16-րդ փողոց, թիվ 10 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-006-0090-0005, հողամասի չափը՝ 0.1339 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Լևոն Արսենի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 43.6 քմ, բնակելի տունը՝ 30.7քմ, բնակելի տունը՝ 41.9քմ բաց բատշգամբը՝ 8.9քմ, բաց պատշգամբը՝ 6.7քմ, բաց պատշգամբը՝ 6.7 քմ և ծածկը՝ 10.7 քմ, ընդամենը 149.2 քմ ճանաչել օրինական:
3. Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 2022YDMLEK:
4. Առաջարկել կառույցն իրականացրած Լևոն Համբարձումյանին վճարելու 1 քմ.՝ 1028 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տների և բաց բատշգամբների համար՝ ընդամենը 138.5քմ, 167 447 ՀՀ դրամ (մեկ հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ և 1քմ 616.8 ՀՀ դրամ օժանդակ կառույցի (ծածկի) համար, ընդամենը՝ 6 600 ՀՀ դրամ հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման

նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:

5. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարները վճարվում են անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355105082:
6. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
7. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած ընկերության կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 309

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 16-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11
ՀԱՍՅԵՌԻՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը և սեփականատեր Արսեն Համբարձումյանի դիմումը, Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի 16-րդ փողոց, թիվ 11 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-006-0090-0006, հողամասի չափը՝ 0.12645 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Արսեն Թոռնիկի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնական կառուցված բնակելի տունը՝ 36.9քմ, բաց բառաչամբը՝ 7.6քմ և ծածկերը՝ 22.3քմ, ընդամենը 66.8քմ ճանաչել օրինական:
2. Ինքնական կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 2022BHSVWM:
3. Առաջարկել կառույցն իրականացրած Արսեն Համբարձումյանին վճարելու 1 քմ.՝ 1028 ՀՀ դրամ ինքնական կառուցված բնակելի տան և բաց բառաչամբի համար՝ ընդամենը 45 643 ՀՀ դրամ (քառասունհինգ հազար վեց հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ և վճարելու 1քմ.՝ 616.8 ՀՀ դրամ օժանդակ կառույցների (ծածկերի) համար, ընդամենը՝ 13 755 ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:
4. Ինքնական կառույցների օրինականացման վճարները վճարվում են անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355105082:

5. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
6. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած ընկերության կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 310

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 16-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ
հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ
397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն
որոշումը և սեփականատեր Թոռնիկ Համբարձումյանի դիմումը, Արենի համայնքի
ղեկավարը **որոշում է՝**

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի 16-րդ փողոց, թիվ 9 հասցեում գտնվող
(ծածկագիր՝ 10-006-0090-0004, հողամասի չափը՝ 0.13583 հա, նպատակային
նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի
կառուցապատման) Թոռնիկ Հմայակի Համբարձումյանին սեփականության
իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնական կառուցված բնակելի տունը՝
64.2քմ և բաց բառաշար՝ 11.1քմ, ընդամենը 75.3քմ ճանաչել օրինական:
2. Ինքնական կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի
կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 20226XYWCV:
3. Առաջարկել կառույցն իրականացրած Թոռնիկ Համբարձումյանին վճարելու 1 քմ.՝ 1028
ՀՀ դրամ ինքնական կառուցված բնակելի տան և բաց բառաշարձի համար՝ ընդամենը
77 408 ՀՀ դրամ (յոթանասուներեք հազար չորս հարյուր ութ) ՀՀ դրամ, հաշվի
առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական
արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և
5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման
(գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-
Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության
սահմանները:
4. Ինքնական կառույցների օրինականացման վճարները վճարվում են անկանխիկ
եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355105082:

5. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
6. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած ընկերության կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ